

## Չարց

Ինչպիսի՞ պայմանների դեպքում է մատակարարը պարտադիր դադարեցնում գազամատակարարումը:

### Պատասխան

Մատակարարը պարտադիր դադարեցնում է գազամատակարարումը՝

- ա) առանց Պայմանագրի (ապօրինի) սպառման դեպքում,
- բ) բաժանորդի դիմումի համաձայն,
- գ) գազասպառման համակարգի տեխնիկական կանոնակարգերով սահմանված տեխնիկական սպասարկում չկատարելու դեպքում,
- դ) գազասպառման համակարգում կամ գազատարների պահպանման գոտիներում բաժանորդի կողմից կատարված այնպիսի ինքնական փոփոխությունների դեպքում, որոնք մատակարարի գնահատմամբ վտանգ են ներկայացնում մարդկանց առողջությանը, կյանքին կամ գույքին,
- ե) բաժանորդի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի պլանային ստուգաչափում չկատարելու դեպքում,
- զ) պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազոր պետական կառավարման մարմնի կարգազրի հիման վրա,
- է) օրենքով սահմանված այլ դեպքերում: